Խոզնավար

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 112 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 45 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1592 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ:
Խոզնավար անվանումն ունի ժողովրդական ստուգաբանություններ և հավանաբար ծագել է «Խոզան» և «Վար « բառերից:
Գյուղը 1490թ. մի հիշատակարանում հիշատակվում է որպես Սյունիքի մասը կազմող Քաշաթաղ գավառի գյուղերից մեկը, որտեղ նույն թվականին ավետարան է օրինակվել, իսկ «Ցուցակ ձեռագրացում» հիշատակվում է որպես գրչության կենտրոն:
Գյուղի տարածքում կան հողմահարված ժայռասյուներ, քարայր-բնակարաններ, Խաչեր կոչվող գյուղատեղին և Ծիծեռնավանք հնավայրը: Գյուղում կա 1675թ. կառուցված սբ Մինաս կիսավեր եկեղեցի, իսկ մեկ այլ եկեղեցու տեղում 1940թ. դպրոց է կառուցվել:
Խոզնավարում է ծնվել բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Հարությունյանը, կոմպոզիտոր Է.Բաղդասարյանը:
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 2121 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1917 հա, որից՝
- վարելահող՝ 289 հա, բազմամյա տնկարկ՝ 18 հա, խոտհարք՝ 109 հա, արոտ՝ 693 հա, այլ հողատեսք՝ 808 հա
- բնակավայրերի հողեր՝ 78 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2 հա,
- անտառային հողեր՝ 113 հա, որից անտառածածկ՝ 82 հա
- ջրային հողեր՝ 7 հա